

րի առաջ ինչ կրնային եղած ըլլալ, այսօրուանը աչքի առջև սւննհարով:

Հաւանորէն անոնք կիսավայրենի էին: Իրենց մայրաքաղաքը, որ իրենց ամէնէն բարեկարգ քաղաքը պէտք է ըլլար, հակառակ անոր որ գրեթէ Պոլսոյ կրկին մեծութիւնը ունէր (49-51), պարսպապատ չէր (51), ինչ որ անսովոր էր այն ատենուան համար: Անոր մօտ՝ լերան գլուխը, ունէին բերդ մը, զոր կը պահպանէին 4-5 հազար մարդ (53-54). իրենց մերկ և բոպիկ վիճակն ալ ցոյց կու տայ, թէ ո՛ր աստիճանախնական էին ընկերային տեսակէտով:

ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆ. — Ըստ Յովհ. Թիւթիւնճիի՝ Հապէշիստան կայսրութիւն մըն էր աւատապետական կազմով, Դուժպիայի թագաւորին գլխաւորութեան տակ: Ան կը կրէր իմպերատոր = կայսր տիտղոսը (տող 56)՝ արտաքին աշխարհի առջև, իսկ Հապէշները զայն կը կոչէին Նեկուսա Նեկուս, որ կը նշանակէ «Արքայից Արքայ»:

Սակայն, ինչպէս կ'երեւի, շատ յետամնաց էր արքունիքի կազմակերպութիւնը: Թագաւորը կը բնակէր պարսպապատ պալատի մը մէջ (50-51), և ունէր հարուստ կանանոց մը (77-83), և պալատական բուլական տարօրինակ սպասարկութեանց ձեւեր (83-90), և մասնաւոր հաշուստ-կապուստ (90-95): Անիկա գերագոյն և միակ դատաւորն էր, որ կը դատէր յանցաւորները հրապարակով, օրը երկու անգամ, առտուն և իրիկունը, ատեն կազմելով՝ 12 դատաւորներով և երկու մեծ վեզիրներով, որոնք իրենց ձեռքը ունէին սուրեր (64-67):

Հապէշներու ըմբռնումին արձագանգ ըլլալով՝ Յովհ. Թիւթիւնճի կը հաւաստէ, թէ թագաւորը ա-